ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

16 հունվարի 2018 թվական

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԴԱՍԱԽՈՍԻ ԿԱՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՊԵՏԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ՀՐԱԶԴԱՆ 2018

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում են «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Հաստատություն) դասախոսի կամ արտադրական ուսուցման վարպետի (այսուհետ՝ Մանկավարժ) թափուր տեղը (այսուհետ՝ Թափուր տեղ) համալրելու մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված գործատուի և մրցույթի մասնակցող անձի կամ անձերի (այսուհետ՝ Մասնակից) միջև ծագող իրավահարաբերությունները:

2. Թափուր տեղ է համարվում մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ Հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված՝ Մանկավարժի չզբաղեցրած պաշտոնը:

3. Թափուր տեղ առաջանալու դեպքում Հաստատության տնօրենը, միչև սահմանված կարգով Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը աշխատանքային պայմանագրի կնքումը, դասաժամերը տրամադրում է նույն Հաստատությունում տվյալ առարկան (մոդուլը) դասավանդող կամ Հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող մանկավարժին:

Տնօրենի կողմից կարող է դասաժամերը հատկացվել Հաստատությունում աշխատող համապատասխան մանկավարժին՝ պահպանելով առավելագույն ծանրաբեռնվածության չգերազանցելու պայմանը:

4. Հաստատությունում Մրցույթ հայտարարվում է միայն նոր մանկավարժի անհրաժեշտության դեպքում:

5. Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 7-օրյա ժամկետում: Անկախ պատճառներից մրցույթը չկայանալու դեպքում Թափուր տեղը լրացնելու համար պարբերաբար հայտարարվում է մրցույթ՝ միչև հաղթող ճանաչվելը՝ պահպանելով սույն կարգի պահանջները:

6. Թափուր տեղ առաջանալու օրվանից միչև մրցույթը կայանալու, Թափուր տեղը մրցութային կարգով չհամալրվելու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից), որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի կարող

են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք, իսկ լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ բնակավայրերի Հաստատություններում՝ նաև համապատասխան որակավորում շնորհող մասնագիտական ուսումնական հաստատության հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողները:

7. Թափուր տեղ առաջանալու մասին Հաստատության տնօրենը տեղեկացնում է լիազոր պետական մարմնին՝ նշելով Թափուր տեղի համար հայտարարության տեքստը՝ պաշտոնական կայքում տեղադրելու նպատակով:

9. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում և Թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝

1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում),

2) առաջացած ժամերը տնօրինվել են սույն կարգի 3-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն,

3) առկա է նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածու,

4)թափուր աշխատատեղը վերաբերվում է պրակտիկաների անցկացմանը, ինչը ենթադրում է կարճաժամկետ զբաղվածություն:

10. Սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքերում աշխատողի հետ կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը Հաստատության տնօրենը հրապարակում է «Կրթություն» շաբաթաթերթում կամ տեղական մամուլում և Հաստատության կայքում (առկայության դեպքում):

12. Հայտարարության տեքստում նշվում է.

1) Հաստատության անվանումը,

2) Թափուր տեղի անվանումը, շաբաթական ժամերի քանակը,

3) սույն կարգի 16-րդ կետով սահմանված փաստաթղթերի ցանկը՝ բնօրինակները և պատճենները,

4) մրցույթի անցկացման օրը, ժամը, տեղը և փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը:

13. Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են Մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

14. Մրցույթի անցկացման օր նշանակվում է փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

III. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

15. Մրցույթին կարող է մասնակցել Հաստատության տվյալ Թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը՝ հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում, իսկ մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին համապատասխանողը:

16. Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձնագիր,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք,

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

17. Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում:

18. Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, Մասնակիցը կարող է, մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

19. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

IV. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

20. Մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ, անվանական կազմը հաստատում է հաստատության տնօրենը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին:

21. Հանձնաժողովը կազմված է 5 անդամից, որում պարտադիր ընդգրկվում են՝ տնօրեն (տնօրենի պաշտոնակատար), տնօրենի ուսումնական գծով տեղակալ, ամբիոնի վարիչ, մեկ համապատասխան ոլորտի գործատու: Հանձնաժողովում կարող են ընդգրկվել համապատասխան մանկավարժ այլ հաստատությունից՝ համաձայնությամբ:

22. Հանձնաժողովի նախագահը հաստատության տնօրենն է (տնօրենի պաշտոնակատարը):

23. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի առնվազն 4 անդամ: Քվորում չապահովելու դեպքում նիստը կարող է հետաձգվել 2 անգամ՝ մինչև 3 աշխատանքային օրով:

24. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են առնվազն «3» կողմ ձայնով:

25. Հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են քարտուղարի կողմից, որը հանձնաժողովի անդամներից մեկն է, առանձին մատյանում և պահպանվում են Հաստատությունում: Մատյանն ավարտվելուց հետո արխիվացվում է օրենքով սահմանված կարգով:

26. Մրցույթին դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել, ըստ ենթակայության, լիազոր պետական մարմնի ներկայացուցիչը:

27. Հանձնաժողովը, մրցույթի անցկացման օրը հրավիրված նիստում, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ընդունում է մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ մերժելու մասին որոշում և հաստատում է մրցույթի մասնակիցների անվանացանկը:

28. Մրցույթին մասնակցելու թույլտվություն չտալու դեպքում հանձնաժողովը հիմնավոր պատճառաբանությամբ մասնակցին գրավոր ներկայացնում է մերժման իրավական հիմքերը (օրենսդրական կամ գերատեսչական ակտի անվանումը, դրույթը):

29. Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած անձանցից ոչ մեկին չի թույլատրում մասնակցել մրցույթին, ապա հանձնաժողովի կողմից ընդունվում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում և սույն կարգի 5-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է նոր մրցույթ:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

30. Մրցույթն անցկացվում է բանավոր: Բանավոր փուլի ժամանակ Մասնակիցը վիճակահանությամբ Հաստատության կողմից նախապես պատրաստված բանավոր առաջադրանքների Հարցաշարից ընտրում է 5 հարց:

31. Յուրաքանչյուր մասնակցին տրվում է մինչև 15 րոպե ժամանակ բանավորին պատրաստվելու համար.

1) Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ բանավոր փուլը անցկացնում է առանձին:

2) Բանավոր փուլի ընթացքը արձանագրվում է Հանձնաժողովի քարտուղարի կողմից, բոլոր հարցերը և մասնակցի հնչեցրած պատասխանները կարող են ձայնագրվել:

3) Հանձնաժողովի անդամները կարող են մասնակցին ուղղել մինչև 5 հարակից հարց:

32. Մասնակցի կողմից հարցազրույցի հարցատոմսի հարցերի վերաբերյալ տրված պատասխանները գնահատվում են «ճիշտ» կամ «սխալ»՝ Հանձնաժողովի նախագահի կողմից:

33. Եթե Մասնակցի տված պատասխանը գնահատվում է «սխալ», ապա Հանձնաժողովի նախագահի կողմից պետք է հնչեցվի ճիշտ պատասխանը:

34. Մասնակիցը համարվում է հարցազրույցի փուլը հաղթահարած, եթե ճիշտ է պատասխանել հարցազրույցի հարցատոմսի 5 հարցերից առնվազն երեքին և հարակից հարցերի (այդպիսիք լինելու դեպքում) գերակշիռ մասին:

35. Արձանագրության մեջ ամրագրվում է յուրաքանչյուր հարցը, հարցի վերաբերյալ Մասնակցի տված պատասխանը, Հանձնաժողովի նախագահի կողմից հնչեցված գնահատականը («ճիշտ է» կամ «սխալ է»), իսկ «սխալ» պատասխանի դեպքում՝ նաև ճիշտ պատասխանը:

36. Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի քարտուղարի, Մասնակցի և Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

37. Յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույցն ավարտելուց հետո անցկացվում է փակ քվեարկություն Հանձնաժողովի նախագահի կողմից կնքված և ստորագրված

քվեաթերթիկների միջոցով: Քվեաթերթիկի վրա նշվում է Մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը /Ձև 3/:

38. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է «կողմ» կամ «դեմ»:

39. Յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույց անցկացնելուց հետո Հանձնաժողովի նախագահը բացում է քվեաթերթիկները և բարձրաձայն հայտարարում Մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը և տրված ձայների «կողմ» կամ «դեմ» լինելը: Մեկից ավելի նշում պարունակող կամ ոչ մի նշում չպարունակող քվեաթերթիկը համարվում է անվավեր:

40. Հանձնաժողովի նախագահի հայտարարություններն արձանագրվում են Հանձնաժողովի քարտուղարի կողմից:

41. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն Մասնակիցը, ով քվեարկության արդյունքում հավաքել է Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները: Ձայների հավասարության դեպքում մրցույթի տվյալ Մասնակիցը հաղթող չի ճանաչվում:

42. Բանավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, այն կարող է բողոքարկվել հանձնաժողովին՝ 1 ժամվա ընթացքում:

43. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

VII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

44. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: Մրցույթի արդյունքների հրապարակման ամփոփիչ արձանագրության մեջ լրացվում է /Ձև 2/.

1) մրցույթի անցկացման վայրը,

2) հաստատության լրիվ անվանումը,

3) թափուր տեղի անվանումը,

4) թափուր տեղերի քանակը,

5) մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը,

6) մրցույթին թույլտրված մասնակիցների թիվը,

7) հաղթող ճանաչվածների անվանացանկը, հավաքած «կողմ» ձայների քանակը,

8) հանձնաժողովի անդամների ստորագրությունները,

9) մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը:

45. Ամփոփիչ արձանագրությանը կից տրվում են.

1) անհատական քվեաթերթերը (քվեարկված և չմարված (առկայության դեպքում),

2) քվեաթերթերի խոտանման արձանագրությունը (առկայության դեպքում),

3) հանձնաժողովի անդամների հատուկ կարծիք(ներ)ը՝ առկայության դեպքում:

VIII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

46. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը Տնօրենին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է դիմում՝ աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

47. Եթե մրցույթում հաղթող է ճանաչվել մեկից ավելի Մասնակից և ներկայացված դիմումների քանակն ավելին է, քան Թափուր տեղը, ընտրությունը կատարում է Տնօրենը:

48. Մրցույթում հաղթող ճանաչված և (կամ) սույն կարգի 47-րդ կետի համաձայն ընտրված Մասնակցի հետ Տնօրենը, դիմումը ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով կնքում է աշխատանքային պայմանագիր:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Գ. Գևորգյան

Ձև 1

Հայաստանի Հանրապետության Հաստատության

(նշվում է հաստատության լրիվ անվանումը)

_____

(նշվում է թափուր տեղի անվանումը) _____

Մանկավարժի թափուր պաշտոնի մրցույթին

մասնակցելու նպատակով հաստատության տնօրեն

պարոն/տիկին_____-ին

_____-ից

դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

_____

(դիմողի հաշվառման վայրը)

_____

(դիմողի հեռ. (աշխատանքային, բնակ., բջջ.)

_____

անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

Ծնված՝ _____

օրը, ամիսը, տարին, վայրը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Մանկավարժի թափուր պաշտոնի համար տրված հայտարարությանը և մրցույթի պայմաններին և անցկացման կարգին խնդրում եմ գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից:

Քաղաքացիությունը _____

Դատապարտվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ

(ընդգծել)_____

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ

գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 284-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների անկի որնէ հիվանդությամբ

տառապում եմ, չեմ տառապում (ընդգծել) _____

Համակարգչային գրագիտությունը _____

_____

(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված փաստաթղթերը:

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

դիմող՝ _____ «__»_____ 20__ թ.

Ձև 2

Ամփոփիչ արձանագրություն

Հայաստանի Հանրապետության մարզի / Հրազդան քաղաքի/_____

_____

_____

(Հաստատության լրիվ անվանումը, ըստ կրթական ծրագրերի աստիճանի)

մակավարժի թափուր աշխատատեղի (լրացվում է մասնագիտության անվանումը)

_____ համար հայտարարված մրցույթի:

1. Թափուր աշխատատեղի քանակը_____:

2. Մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը_____:

3. Մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը_____:

4. Փակ քվեարկության արդյունքը (լրացվում են բոլոր մասնակիցների հավաքած ձայները)

1)

2)

3)

5. Հաղթող ճանաչված մասնակիցների անվանացանկը, հավաքած ձայների քանակը՝

1)

2)

3)

6. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունները

1) Հանձնաժողովի նախագահ՝ _____ /_____/

2) հանձնաժողովի անդամ՝ _____ /_____/

3) հանձնաժողովի անդամ՝ _____ /_____/

4) հանձնաժողովի անդամ՝ _____ /_____/

5) հանձնաժողովի անդամ՝ _____ /_____/

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____/_____/

Ձև 3

Անհատական քվեաթերթիկ

1. Հաստատության անվանումը _____

2. Թափուր տեղի անվանումը _____

3. Հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը _____

4. Մասնակցի անունը, ազգանունը, ստորագրությունը _____

Քվեարկության արդյունքը՝

ԿՈՂՄ ☐

Հանձնաժողովի ԴԵՄ ☐

նախագահ՝ _____

Կ.Տ.

Ինքնակենսագրություն

1. Աշխատանքային գործունեությունը /վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը/
2. Կրթությունը /մասնագիտական կրթության որակավորման աստիճանը, կրթության վկայագրերը /դիպլոմներ, հավաստագրեր, վկայականներ/
3. Կոչումները
4. Որակավորման տարակարգ
5. Հրատարակած հոդվածներ
6. Լեզուների իմացություն
7. Համակարգչային իմացությունը
8. Այլ տվյալներ